Արձանագրություն N 3
ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի բացման նիստի

ք.Երևան 26 մարտի 2019թ.
Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Հ. Օհանյան
Հանձնաժողովի բացող անդամներ՝ Ս. Թամրազյան
Մ. Հովհաննիսյան
Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան
Լ. Սահակյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Հ. Նավասարդյան

1. Հանձնաժողովի նիստի օրակարգը
(Հ. Օհանյան)

Հաստատել հանձնաժողովի նիստի հետևյալ օրակարգը.
1. Հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին,
2. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին,
3. Անհամապատասխանությունները շտկելու մասին,
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Գնման ընթացակարգի հայտեր պարունակող ծրարների բացման մասին
(Հ. Օհանյան)

Մասնակիցների կողմից ներկայացված փաթեթներում Հրավերով սահմանված փաստաթղթերը առկա են:

Մասնակիցներիի կողմից ներկայացված փաթեթներում փաստաթղթերը կազմված են գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ բացառությամբ Ա. Ա. Գեղամյան ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 1-ի. 7-րդ չափաբաժնի համար գնային առաջարկ ներկայացված չէ:

Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Անհամապատասխանությունները շտկելու մասին
(Հ. Օհանյան)

Քանի որ հայտերի գնահատման արդյունքում արձանագրվել են անհամապատասխանություններ ուստի հանձնաժողովը որոշեց.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման մասին կարգի 41-րդ կետի համաձայն վերը նշված անհամապատասխանությունների մասին ծանուցել՝ Ա. Ա. Գեղամյան ՍՊԸ -ին՝ հայտը շտկելու նպատակով, որը պետք է ներկայացնի իր շտկումները էլեկտրոնային եղանակով՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով, մինչև 27.03.2019թ. 15:00 ներառյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

4. **<u>Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին</u>**

(Հ. Օհանյան)

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ՀՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/4 ծածկագրով գնումների էլեկտրոնային համակարգի (ARMEPS) միջոցով գնման ընթացակարգի գնահատման համար Ա. Ա. Գեղամյան ՍՊԸ -ի հայտում արձանագրված անհամապատասխանությունները շտկելու նպատակով հանձնաժողովի նիստ հրավիրել 2019 թվականի մարտի 27-ին, ժամը 15:00-ին՝ ք. Երևան, Գ. Հովսեփյան 26 հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝0

Հանձնաժողովի.

նախագահ՝ Հ. Օհանյան

բացող անդամներ՝ Ս. Թամրազյան

Մ. Հովհաննիսյան

գնահատող անդամներ՝ Ա. Հակոբյան

Լ. Սահակյան

քարտուղար՝ Հ. Նավասարդյան